«Հույս և ապագա» երեխաների աջակցության և զարգացման բարեգործական

ՀԿ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

<<ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿԱՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՁևԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ>>

Հեղինակ՝ Գայանե Նավասարդյան

Ղեկավար՝ Վարդուհի Մելքոնյան

Երևան 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

1.ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ……4

2.ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ……6

3.ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ……9

4. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ……17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ……19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթությունը կրթական համակարգի առաջին օղակն է, որի հաջողություններով է պայմանավորված ողջ կրթական համակարգի առաջընթացը: Կրթական ցանկացած բարեփոխում սկիզբ է առնում և փորձարկվում է նախադպրոցական կրթության ոլորտում:

Նախադպրոցական կրթության տարաբնույթ խնդիրների մշակմամբ և իրականացմամբ զբաղվում է նախադպրոցական մանկավարժությունը: Նախադպրոցական մանկավարժության գիտական ուսումնասիրությունների դաշտն են կազմում մանկավարժական այն բոլոր գործընթացները, որոնք ուղղված են նախադպրոցահասակ երեխաների զարգացմանն ու կրթությանը:

ՀՀ կառավարությունը 2021թ. մայիսի 13-ին հաստատել է նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը: Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է: Այն ներառում է, մասնավորապես, ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները, երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը կամ դրանց հարաբերակցությունը, երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի դիտարկման ձևերը:

Սույն աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է նախադպրոցական կրթության պետական չափորոշչի ներդրման հետևանքով նախադպրոցական տարիքի երեխաների մոտ համապատասխան կարողունակությունների ձևավորման կարևորությամբ և անհրաժեշտությամբ:

Աշխատանքի **նպատակն** է վերհանել նախադպրոցական տարիքի երեխաների մոտ համապատասխան կարողունակությունների ձևավորման կարևորությունը և անհրաժեշտությունը, ինչպես նաև մատնանշել վերջիններիս ձևավորման ուղիները:

Աշխատանքի տեսական և մեթոդական հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության կողմից 2021թ. մայիսի 13-ին հաստատված նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը, ինչպես նաև մի շարք այլ աղբյուրներ:

1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հանրակրթության որակի ապահովման տեսանկյունից կարևորվում է երեխաների վաղ ընդգրկումը կրթական ծրագրերում: Երեխայի բնականոն զարգացումը և որակյալ նախադպրոցական կրթությունը մեծապես պայմանավորում են մարդու հետագա հաջողություններն ու անհաջողությունները կրթական բոլոր մակարդակներում, նպաստում նրա կարողությունների զարգացմանը՝ միջավայրում հարմարվելու և սոցիալականացման հարցերում:

Նախադպրոցական տարիքը երեխայի զարգացման այն ժամանակահատվածն է, երբ ձևավորվում է նրա՝ որպես քաղաքացու հոգևոր, մտավոր և ֆիզիկական որակները: Այս շրջանի առանձնահատկությունն այն է, որ ապահովվում է ընդհանուր զարգացումը, ի տարբերություն մյուս փուլերի, երբ զարգացումն ունի առավել ուղղորդված բնույթ: Երեխայի բնականոն և համակողմանի զարգացման ապահովման տեսանկյունից մեծ է նախադպրոցական կրթության համակարգի դերը:

Անկախ նրանից, թե ինչպիսի փաստարկներ և ծրագրեր են առաջադրվում, շատ կարևոր է ապահովել, որպեսզի մանկավարժական բոլոր ռազմավարությունների և պրակտիկայի հիմքում ընկած լինեն երեխայի այն շահերը, որոնք առնչվում են վաղ մանկության զարգացման խնդիրներին, և որ երեխան ստանա համարժեք աջակցություն՝որակյալ, բարձրակարգ ծառայությունների միջոցով:

Նախադպրոցական կրթության կարևորությունն է ընդգծվում նաև նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենքում:

2011 թվականին ՀՀ ԿԳՆ-ն հաստատեց նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, որն իր մեջ ներառում էր նաև «Ծննդից մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները», որոնք նկարագրում են, թե ինչ պետք է իմանա և ինչ պետք է կարողանա անել երեխան որոշակի տարիքում: Դրանք զարգացման տարբեր ոլորտներում մինչև 6 տարեկան երեխաների վերաբերյալ մեր ունեցած ակնկալիքներն են՝ պայմանավորված տարիքային բնականոն զարգացման օրինաչափություններով և ազգային-մշակութային առանձնահատկություններով:

Այս չափորոշիչները սահմանված են, որպեսզի ինչպես ընտանիքները, այնպես էլ երեխայի խնամքի և կրթական հաստատությունները արդյունավետորեն կազմակերպեն և իրականացնեն երեխայի դաստիարակությունը, զարգացումն ու կրթությունը՝ սկսած ծննդից մինչև դպրոց գնալու տարիքը:

Նախադպրոցական ուսումնական հաստատություն գալիս են երեխաներ, ովքեր իրենց հետ բերում են նոր մշակույթ:

Վաղ մանկությունը երեխայի աճի, զարգացման և սովորելու բացառիկ ժամանակաշրջանն է: Կարևոր է նկատի ունենալ, որ որոշ երեխաներ կարող են չափորոշիչներով սահմանված ակնկալիքներից շատ ավելի բարձր ցուցանիշներ ունենալ, մինչդեռ որոշ երեխաներ էլ հնարավոր է, որ ամբողջապես չտիրապետեն այս փաստաթղթում նշված գիտելիքներին և հմտություններին: Ուստի կարևոր է, որ երեխաների նկատմամբ ակնկալիքների մասին մտածելիս հաշվի առնենք նաև նրանց անհատական առանձնահատկությունները:

Երեխաները տարբեր են լինում՝ կախված իրենց բնածին հատկություններից, ունեցած փորձից, ունակություններից, առողջական վիճակից և սովորելու նկատմամբ ունեցած վերաբերմունքից, հետևաբար նրանց զարգացումը տարբեր տեմպերով է ընթանում:

Պետք է ընդունել, որ երեխաների միջև այսպիսի տարբերությունները բնական են, ուստի բոլոր երեխաների նկատմամբ անհրաժեշտ է դրսևորել հարգանք և նրանց վերաբերվել որպես ունակ անհատների, որոնք կարող են սովորել, հասկանալ իրենց շրջապատող աշխարհը, ընտրություն կատարեն, սեփական կարծիք արտահայտեն:

Մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների ուսումնառությունը և զարգացումը բազմակողմանի է, քանի որ ֆիզիկական զարգացմանը զուգընթաց զարգանում է երեխայի խոսքը և լեզուն, զգացմունքները, սոցիալական շփման և իմացական կարողությունները: Հետևաբար ուսումնառության բոլոր ոլորտները կարևոր են առողջ զարգացման համար և պետք է հավասարապես արժևորվեն:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում սաների զարգացումը ճիշտ, նպատակային և ամենակարևորը՝ արդիական դարձնելու համար, ինչպես արդեն

ասացինք, պետք է ուսումնական հաստատությունը դարձնել իրական սովորողների համայնք, որտեղ կսովորեն բոլորը. և՛ երեխաները, և՛ դաստիարակները, և՛ ծնողները։ Կրթական հաստատության, մասնավորապես՝ մանկապապտեզների գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է նաև ընտանիքի հետ նրա համագործակցության արդյունավետությունից։ Խնդիրն այն է, որ երեխայի, հատկապես նախադպրոցական տարիքի, ուսուցման զարգացման գործում հնարավոր չէ մեծ արդյունք ակնկալել, եթե ծնողներն ու ընտանիքը չեն դառնում նախադպրոցական ուսումնական հաստատության գործընկերը։

Նախադպրոցական կրթությունը դրական ազդեցություն ունի երեխաների զարգացման վրա։ Նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվածությունը կարող է ընդլայնել երեխայի ճանաչողական կարողությունները, գրագիտությունն ու հաջողության հասնելու համար անհրաժեշտ սոցիալական հմտությունները։

2.ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը (այսուհետ՝ չափորոշիչ) հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը։

Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է։

Չափորոշիչը ներառում է՝

1) ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները.

2) երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը կամ դրանց հարաբերակցությունը.

3) երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի դիտարկման ձևերը.

4) նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառական և երեխայակենտրոն միջավայրի չափանիշները, որոնք հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը.

5) նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի անվտանգ միջավայրի և աղետներին պատրաստվածության չափանիշները:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը. հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը:

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի իրականացումը նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից պարտադիր է՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից:

Ըստ չափորոշչի, մշակվում են միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների նախադպրոցական ֆակուլտետների (բաժինների) ուսումնական ծրագրեր և վերապատրաստումների թեմատիկ պլաններ, ծնողական կրթության ծրագրեր:

Նախադպրոցական կրթության բովանդակությունը պայմանավորված է նախադպրոցական տարիքային բոլոր փուլերի զարգացման անհատական առանձնահատկություններով:

Նախադպրոցական կրթության բովանդակությունը կազմում են նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական ընդհանուր

նպատակներին համապատասխան ընտրված՝ ընկալման, ըմբռնման ու յուրացման համար նախատեսված գիտելիքները, կարողությունները, հմտությունները և տարբական բարոյական արժեքային հարաբերությունները:

Նախադպրոցական տարիքի երեխաների կրթության բովանդակությունը հիմնականում ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

1) **շարժողական ոլորտ.**
2) **խոսքի և հաղորդակցական ոլորտ.**
3) **հուզական, սոցիալ-անձնային ոլորտ.**
4) **իմացական ոլորտ.**
5) **ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ:**

Նախադպրոցական երեխաների համար սահմանված հինգ ոլորտների համար նախատեսվում են վերջնարդյունքներ, այսինքն՝ ինչ պետք է կարողանան անել և ինչ պիտի հասկանան վեց տարեկան երեխաները: Ըստ չափորոշչի՝ վերջնարդյունքներն ուղղված են լինելու կարողունակությունների ձեւավորմանը:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջներում ավելացել է նաեւ օրենքի գաղափարի և կարևորության հիմունքների հետ ծանոթացման ներառումը: Այսինքն՝ երեխան, բացի խոսքի, տրամաբանության, մտավոր, ֆիզիկական, գեղարվեստագեղագիտական զարգացման, բնագիտության հիմունքներին ծանոթացման ներառումից պիտի որոշակի տեղեկություններ ունենա օրենքի մասին:

Հավելենք նաեւ, որ չափորոշչով տրված են նաև խմբասենյակների ձևավորման հիմնական պահանջները, թե ինչ սարքավորումներ և խաղալիքներ ու նյութեր պետք է ապահովվեն երեխայի ներդաշնակ զարգացման համար: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կիրառվող սարքերը, սարքավորումները, խաղալիքներն ու նյութերը պետք է համապատասխանեն երեխայի տարիքին և սահմանված առողջապահական նորմերին:

Չափորոշչում սահմանված են նաեւ երեխաների զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջները՝ ըստ տարիքային խմբերի։

1-ից մինչև 3 տարեկան երեխաների խմբասենյակում պետք է առկա լինեն խճանկարներ, «մատրյոշկա» տիկնիկներ, երկրաչափական տարբեր անցքերով աղյուսիկներ, գունեղ նկարներով գրքեր, գրենական պիտույքներ։

Իսկ 3-ից մինչև 6 տարեկան երեխաների խմբասենյակում նախատեսվում են բազմապիսի դիդակտիկ խաղեր (լոտո, դոմինո, նկարների հավաքածուներ), տարբեր սյուժետային խաղային հավաքածուներ, լեգոներ և խաղալիքներ (դոմինո, շաշկի, շախմատ և այլն), ազգային եւ այլազգի կենցաղի առարկաների նմուշներ։

Չափորոշչով նախատեսվում է շարժունակության խանգարումներ ունեցող երեխաների համար խմբասենյակում և դրանից դուրս ունենալ հարմարեցված աթոռ-սեղան, կանգնակ, սայլակ, քայլակ, տարբեր չափսերի բարձեր, աթոռակներ՝ նստելու ճիշտ դիրք ապահովելու համար, հարմարեցված սպասք, հարմարեցված գրենական պիտույքներ։

3.ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են։ Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով։

Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները նկարագրում են, թե ինչ պիտի իմանա, կարողանա անել և

հասկանա վեց տարեկան երեխան: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Սահմանված **հինգ՝ շարժողական, խոսքի և հաղորդակցման , հուզական, սոցիալ-անձնային, իմացական, ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտներում**, երեխաները պետք է տիրապետեն **9 կարողունակությունների՝ լեզվական և հաղորդակցական, ճանաչողական և մոտիվացիոն, ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական, թվային և մեդիա, մշակութային, մաթեմատիկական և տեխնիկական, տնտեսական, ֆիզիկական կրթության և առողջ ապրելակերպի**:

Այսպես, նախադպրոցական կրթության կարողունակություններն են՝

1) **լեզվական և հաղորդակցական կարողունակություն** ՝երեխան տիրապետում է գրական հայերենին, հաղորդակցվում տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորում խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին: Ընդունակ է ճանաչել բանավոր ներկայացվող երևույթները, ըմբռնել, նկարագրել, մեկնաբանել դրանք, ներկայացնել բացատրություններ: Երեխան ունակ է կողմնորոշվել լեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ունի տարրական պատկերացումներ վանկի, հնչյունի և տառի մասին, ինքնուրույն ձևակերպում է սեփական մտքերը՝ ազատ և կապակցված արտահայտելով կարծիք, վերաբերմունք որևէ երևույթի մասին: Այլ մարդկանց հետ հաղորդակցության մեջ պատկերացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը և մեծահասակների օգնությամբ կիրառում դրանք.

2) ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն՝ երեխան, իր տարիքին համապատասխան, ընդունակ է պատճառահետևանքային կապեր տեսնել երևույթների, իրադարձությունների միջև, ճանաչել առարկաների և օբյեկտների կապերը, հարաբերությունները, նոր խնդիրներ լուծել: Դրսևորում է ակտիվություն, հետաքրքրասիրություն, ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթների, ինչպես նաև հարաբերությունների կառուցման հանդեպ: Երեխան հաճույքով (ակտիվ) ներգրավվում է գործունեության տարբեր ձևերի, մտավոր տարբեր գործողությունների, նոր բացահայտումների մեջ.

3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն՝ երեխան ճանաչում է իր արտաքին առանձնահատկությունները, ձեռք է բերում սեռադերային պատկերացումներ: Երեխան ունի պատկերացում սեփական հնարավորությունների մասին, վստահություն սեփական ուժերի և կարողությունների հանդեպ: Ընդունակ է ինքնակազմակերպվելու, դրսևորում է ինքնուրույնություն և ինքնասպասարկման հմտություններ: Գործողություններում դրսևորում է նպատակաուղղվածություն և կենտրոնացվածություն: Երեխան ճանաչում է սեփական և այլոց հույզերը, կարողանում է կառավարել սեփական հույզերը: Ճանաչում է մեծահասակների և հասակակիցների փոխհարաբերություններում սահմանված վարքային կանոնները և դրսևորում է սոցիալապես ընդունված նորմերին համապատասխան վարք: Շփման մեջ նախաձեռնող և կառուցողական է, դրսևորում է ընկերակցելու, համագործակցելու հմտություններ.

4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն՝ նախադպրոցական տարիքում երեխան տիրապետում է բարեվարքության և սոցիալական արդարության պարզագույն կանոններին. դրսևորում է հարգանք և հոգատարություն շրջապատի հանդեպ, գնահատում է արարքների բարոյական ուղղվածությունը: Ճանաչում է հայրենիքը, Հայաստանի խորհրդանիշները (դրոշ, զինանշան, օրհներգ), դրսևորում է սեր և նվիրվածություն հայրենի երկրի հանդեպ: Ունի տարրական պատկերացումներ սեփական իրավունքների ու պարտականությունների մասին.

5) թվային և մեդիա կարողունակություն ՝երեխան ունի տարրական պատկերացումներ մեդիայի վերաբերյալ, կողմնորոշվում է մեդիա բազմազանության մեջ, մեծահասակի աջակցությամբ գնահատում է ներկայացված տեղեկատվությունը, այն համադրում սեփական պատկերացումներին՝ դրսևորելով քննադատական և ընտրողական մոտեցում: Երեխան կարողանում է օգտվել մեդիա տարրական գործիքներից՝ միևնույն ժամանակ հասկանալով դրանց կիրառման հնարավոր վտանգները և այդ հարցում սեփական պատասխանատվությունը: Երեխան դրսևորում է առարկաների, երևույթների մոդելավորման և ստեղծագործական կարողություններ, տարբերում է իրական և վիրտուալ աշխարհները, հասկանում դրանց տարբերությունները.

6) մշակութային կարողունակություն ՝երեխան կարողանում է գնահատել գեղեցիկը, ճանաչում և վերլուծում է հանրահայտ հայ և արտասահմանյան մանկագիրների գեղարվեստական ստեղծագործությունները, ճանաչում է ազգային և համաշխարհային մշակութային նմուշների ինքնատիպությունը: Դրսևորում է ընդգծված հետաքրքրություն գեղարվեստական գործունեության հանդեպ, ունակ է երաժշտության, կերպարվեստային գործունեության տարբեր տեսակների, ազգային տոների ու ավանդույթների միջոցով արտահայտելու սեփական հույզերը, զգացմունքներն ու տպավորությունները.

7) մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն՝ երեխան կարողանում է կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ, համեմատում, հետազոտում է առարկաները և երևույթները, գտնում է տարբեր խնդիրների լուծումներ, ճանաչում է թվանշանները, տիրապետում է նախաթվային և թվային հասկացություններին. երեխան կարողանում է որոշել առարկաների քանակը, համեմատել դրանք ըստ մեծության, չափի, ձևի և գույնի, տարբերակել մասը և ամբողջը, երկրաչափական պատկերներն ըստ հատկանիշների: Կարողանում է առարկաները տարբերակել նաև ըստ նյութի: Ցուցաբերում է հետաքրքրություն սարքավորումների հանդեպ, կարողանում է ծանոթ տեխնիկական հանգույցներից կառուցել նոր համադրություններ.

8) տնտեսական կարողունակություն ՝երեխան կարողանում է համարժեք ճանաչել և վերլուծել մեծերի աշխատանքը և դրանից ստացված արդյունքները: Գիտի տարբեր մասնագիտությունների անվանումներ և դրանց առանձնահատկությունները: Ցուցաբերում է տնտեսական պարզ հասկացությունների իմացություն, գիտի իր հետ առնչվող առարկաների ձեռքբերման եղանակները, կիրառում է տնտեսական պարզ բառապաշար: Երեխան հասկանում է շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությունն ու փոխկապակցվածությունը: Ճանաչում է բնության երևույթները, գիտի բնության առանձին երևույթների վտանգների, դրանցից պաշտպանվելու մասին, անվտանգ վարքագիծ է դրսևորում բնության առանձին երևույթների՝ կայծակի, ամպրոպի, կարկուտի, անձրևի, մառախուղի ժամանակ: Ունի տարրական պատկերացումներ շրջակա միջավայրի և դրա պահպանման վերաբերյալ: Կարողանում է նկարագրել մարդու և տնտեսության ազդեցությունը բնության վրա:

Հասկանում է շրջակա միջավայրի պահպանման գործում սեփական դերը, նշանակությունը և մասնակցում է այդ գործընթացում.

9) ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն՝ երեխան պատկերացում ունի ֆիզիկական վարժությունների առողջարարական նշանակության, առողջ սննդի, առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոնների՝ օրգանիզմի կոփման, օրվա ռեժիմի, հիգիենիկ կանոնների, ճիշտ կեցվածքի պահպանման մասին: Ընկալում է ֆիզիկական վարժությունների ճիշտ կատարման ձևը, ճանաչում և տարբերում է ամառային և ձմեռային մարզաձևերը: Ընդհանուր պատկերացում ունի շարժողական ընդունակությունների, տարածված մարզաձևերի, մարզագույքի, սպորտային հանդերձանքի մասին, ճանաչում է հայ և այլազգի անվանի մարզիկներին: Երեխան ընդունակ է ճիշտ կատարելու մարմնամարզական, աթլետիկական վարժություններ, տարաբնույթ շարժողական գործողություններ շարժախաղերում, մարզախաղերում, շարժողական ակտիվության այլ ձևերում: Դրսևորում է անհրաժեշտ ֆիզիկական պատրաստվածություն և պահպանում է առողջ ապրելակերպի վարման կանոնները: Երեխան ինքնուրույն կատարում է նմանողական շարժումներ, ընդհանուր զարգացնող վարժություններ՝ առանձին, զույգերով, մարզագույքով: Վարժությունների կատարման ընթացքում, շարժախաղերում, թիմային խաղերում դրսևորում է ինքնուրույնություն, կարգապահություն, կամք, պատասխանատվություն, համագործակցություն, վճռականություն, փոխօգնություն, ընկերասիրություն, նախաձեռնողականություն:

Նախադպրոցական երեխաների համար սահմանված հինգ ոլորտների համար նախատեսվում են վերջնարդյունքներ, այսինքն՝ ինչ պետք է կարողանան անել և ինչ պիտի հասկանան վեց տարեկան երեխաները:

Լեզվական և հաղորդակցական կարողունակության շրջանակում երեխան պետք է տիրապետի գրական հայերենին, հաղորդակցվի տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորի խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին: Ընդգծվում է, որ երեխան ունակ է կողմնորոշվել լեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ինքնուրույն ձևակերպում է սեփական մտքերը՝ ազատ և կապակցված արտահայտելով կարծիք, վերաբերմունք որևէ երևույթի մասին:

Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության շրջանակում երեխան պետք է ճանաչի իր արտաքին առանձնահատկությունները, ձեռք բերի սեռադերային պատկերացումներ: Սա թերևս ամենաքննարկվող հարցերից մեկն է, որ մեր հասարակության մի շերտի կողմից առարկվում եւ չէր ընդունվում:

Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունը ենթադրում է, որ նախադպրոցական տարիքում երեխան բացի սոցիալական արդարության պարզագույն կանոններին տիրապետելուց, ճանաչում է հայրենիքը, Հայաստանի խորհրդանիշները /դրոշ, զինանշան, օրհներգ/, դրսևորում է սեր և նվիրվածություն հայրենի երկրի հանդեպ: Ունի տարրական պատկերացումներ սեփական իրավունքների ու պարտականությունների մասին:

Թվային և մեդիա կարողունակությունը սահմանում է, որ երեխան տիրապետի մեդիագրագիտության և անվտանգության հիմնական կանոններին՝ հասկանալով դրանց հետ կապված վտանգները: Այս կարողունակությունը կձևավորվի ավագ խմբի երեխաների մոտ. համակարգիչը կօգտագործվի ոչ թե խաղեր խաղալու համար, այլ երեխային տեղեկություն տալու այն անվտանգ օգտագործելու մասին, այսինքն՝ մեդիագրագիտության և մեդիաանվտանգության կանոններին տիրապետելու համար երեխան պետք է ունենա անհրաժեշտ գիտելիքներ: Մասնավորապես՝ ավագ խմբի երեխան պետք է կարողանա նշել իրական և մեդիա միջավայրերի տարբերությունները՝ մեդիայից ստացված տեղեկատվությունը համադրելով իրական կյանքին:

Մշակութային կարողունակությունը հնարավորություն կտա երեխաներին գնահատել գեղեցիկը, ճանաչել և վերլուծել հանրահայտ մանկագիրների գեղարվեստական ստեղծագործությունները՝ արվեստի միջոցով արտահայտելով սեփական հույզերը, զգացմունքներն ու տպավորությունները:

Մաթեմատիկական և տեխնիկական կարողունակությունը սահմանում է, որ երեխան կարողանում է կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ, համեմատում, հետազոտում է առարկաները և երևույթները, գտնում է տարբեր խնդիրների լուծումներ, ճանաչում է թվանշանները: Կարողանում է առարկաները տարբերակել ըստ նյութի:

Տնտեսական կարողունակություն. Երեխան կարողանում է համարժեք ճանաչել և վերլուծել մեծերի աշխատանքը և դրանից ստացված արդյունքները: Ունի տարրական պատկերացումներ շրջակա միջավայրի և դրա պահպանման վերաբերյալ: Հասկանում է շրջակա միջավայրի պահպանման գործում սեփական դերը, նշանակությունը և մասնակցում է այդ գործընթացում:

Ֆիզիկական կրթության և առողջ ապրելակերպի կարողունակություններն էլ սահմանում են, որ երեխան պատկերացում պետք է ունենա ֆիզիկական վարժությունների առողջարարական նշանակության, առողջ սննդի, առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոնների՝ օրգանիզմի կոփման, օրվա ռեժիմի, առողջ սննդի, հիգիենիկ կանոնների, ճիշտ կեցվածքի պահպանման մասին:

Ճանաչողական և մոտիվացիոն կարողունակության շրջանակում երեխան պետք է կարողանա՝ պատճառահետևանքային կապեր տեսնել երևույթների, իրադարձությունների միջև, ճանաչի առարկաների և օբյեկտների թաքնված կապերը. այստեղ կարեւորվում է երեխայի՝ գործունեության տարբեր ձևերի մեջ ներգրավվումը ու նոր բացահայտումներին ուղղված նրա կարողունակության զարգացումը:[1]

[1] Նոր չափորոշչով մանկապարտեզում երեխաները կսովորեն մեդիագրագիտություն, կծանոթանան օրենքի գաղափարին. Նախագիծ, https://www.armtimes.com/hy/article/208780

4. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում **1-ից մինչև 3 տարեկան** երեխաների զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջներն են՝ խմբասենյակում առկա են խաղային պարագաներ երեխաների ճանաչողական զարգացման համար՝ խճանկար, բուրգ, երկրաչափական տարբեր անցքերով աղյուսիկներ, բազմագույն խորանարդիկներ, գնդակներ, փոքրիկ մեքենաներ, գրքեր գունեղ նկարներով. խորանարդիկներ, փայտիկներ. առկա են խաղային նյութեր և սարքավորումներ՝ երեխաների երաժշտական ունակությունների զարգացման համար. առկա են նյութեր և սարքավորումներ՝ երեխաների ստեղծագործական գործունեության համար. ալբոմներ, թղթեր, վրձիններ, մատիտներ, ֆլոմաստերներ, պլաստիլին և այլն. առկա են խաղալիքներ՝ զբոսանքների ժամանակ խաղալու համար. փոքրիկ դույլեր, կաղապարներ, բահեր և այլ

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում **3-ից մինչև 6 տարեկան** երեխաների զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջներն են՝հաստատությունում առկա են՝ սարքավորումներ և դիդակտիկ միջոցներ երեխաների համակողմանի զարգացման համար. տեսալսողական միջոցներ. ալբոմներ, գեղարվեստական գրականություն և այլ նյութեր երեխաների տպավորությունները հարստացնելու համար. խմբասենյակում առկա են՝ դիդակտիկ խաղեր (լոտո, դոմինո, նկարների հավաքածուներ), տարբեր սյուժետային խաղային հավաքածուներ, լեգոներ և խաղալիքներ՝ տարաբնույթ գործունեության ժամանակ երեխաների զարգացման համար. խաղեր երեխաների ինտելեկտուալ զարգացման համար (դոմինո, շաշկի, շախմատ և այլն). խաղալիքներ և սարքավորումներ սենսորային զարգացման համար. դիտողական, նկարազարդ նյութեր. պայմաններ երեխաների անհատական և համատեղ ակտիվության դրսևորման համար. բժշկական սարքավորումներ երեխաների բուժկանխարգելիչ միջոցառումների համար. ստեղծված են պայմաններ երեխաների թատերական գործունեության զարգացման համար. հաստատությունում առկա է պետական խորհրդանիշների

անկյուն (դրոշ, զինանշան, օրիներգ). առկա են ազգային, ժողովրդական կենցաղի առարկաների նմուշներ, ազգային տարազներով տիկնիկներ. առկա է մանկական գեղարվեստական գրականություն. խմբասենյակում առկա են երթևեկության կանոններին ծանոթացնող դիդակտիկ խաղեր և խաղալիքներ, բակում ստեղծված են պայմաններ երթևեկության կանոնները կիրառելու համար. հաստատությունում ստեղծված են պայմաններ երեխաների ֆիզիկական զարգացման համար. առկա է մարզադահլիճ, դեկորատիվ կամ իսկական լողավազան, ֆիզիկական ակտիվության համար անհրաժեշտ սարքավորումներ, մարզական գույք. խմբասենյակում առկա են նյութեր և սարքավորումներ երեխաների մոտ թվի, մեծության, տարածական և ժամանակային պատկերացումների ձևավորման համար (թվանշաններ, կշեռքներ, չափման միավորներ գրատախտակ, օրացույց, ժամացույց. ավազի, արևային ժամացույց և այլն)՝ տեղադրված համապատասխան զարգացման կենտրոնում. համակարգչի առկայություն՝ մեդիագրագիտության և մեդիաանվտանգության կանոններին տիրապետելու համար անհրաժեշտ հավելվածներով. առկա են նյութեր և սարքավորումներ երեխաների փորձարարական աշխատանքների ցուցադրման համար (գլոբուս, քարտեզ, մակետներ, նկարների հավաքածուներ, մագնիս, սեղանային տպագիր խաղեր և այլն). հաստատությունում ստեղծված են պայմաններ երեխաների խոսքի զարգացման համար. առկա է մանկական գրադարան հաստատությունում առկա են խաղեր և խաղալիքներ տարբեր տեսակի խաղերի համար. սյուժետադերային, շարժուն, մարզական, դիդակտիկ և այլն. խմբասենյակում առկա են նյութեր, որոնք կարող են հիմք ծառայել՝ որպես փոխարինող առարկաներ օգտագործելու համար. խմբասենյակում և դրանից դուրս ստեղծված են պայմաններ շարժունակության խանգարումներ ունեցող երեխաների համար. հարմարեցված աթոռ սեղանով, կանգնակ, սայլակ, քայլակ, տարբեր չափսերի բարձեր, աթոռակներ նստելու ճիշտ դիրք ապահովելու համար, հարմարեցված սպասք (սպասքի ադապտացիաներ), հարմարեցված գրենական պիտույքներ:[2]

[2] ՀՀ կառավարության որոշումը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին, https://lib.armedu.am/files/resource/files/2022-02-24/9368835223ec84664689175ec655a9e8.pdf, ընդ. 13.05.2021

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքը կարևորագույն շրջան է անձի կայացման և բնականոն զարգացման համար, որը մեծապես կախված է երեխայի շրջապատող միջավայրից: Ընտանիքից բացի նախադպրոցականի անձի զարգացման մյուս կարևոր միջավայրն է նախադպրոցական ուսումնական հաստատությունը, որտեղ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի հոգեբանամանկավարժական մթնոլորտ, որում կխթանվեն և կզարգանան նախադպրոցականի դեռևս նոր ձեռք բերած անձնային նորագոյացությունները՝ ինքնուրույնություն, հուզական ոլորտի դոմինանտում վարքային և դրդապատճառային ոլորտներում, անձի ինտեգրված և ամբողջական կեցություն և այլն, որոնք էլ պիտի հիմք հանդիսանան երեխայի «Ես»-ի հետագա ամրացմանն ու կայունացմանը: Նախադպրոցական կրթությունը դրական ազդեցություն ունի երեխաների զարգացման վրա: Մանկապարտեզի կրթադաստիարակչական աշխատանքը ընդլայնում է երեխայի ճանաչողական կարողությունները, գրագիտությունն ու հաջողության հասնելու համար անհրաժեշտ սոցիալական հմտությունները, ինչպես նաև խթանում է դպրոցական ձեռքբերումները տարրական դասարաններում: Երեխայի բնականոն և համակողմանի զարգացման ապահովման տեսանկյունից մեծ է նախադպրոցական կրթության համակարգի դերը:

Այսպիսով, նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը պետք է համահունչ լինի վաղ մանկության զարգացման ոլորտում Հայաստանի Հանրապետությունում և միջազգային ասպարեզում տեղի ունեցող ժամանակակից կարևորագույն գործընթացներին: Չափորոշիչը միտված է երեխաների իրավունքների պաշտպանությանը, համընդհանուր ներառմանը, կրթության որակի բարձրացմանը, բազմազանության խթանմանը, սահուն անցմանը դպրոցին և այլն: Նախադպրոցական կրթության չափորոշչի փոփոխությունը պայմանավորված է հանրակրթության պետական նոր չափորոշչի ընդունմամբ, որտեղ նախադպրոցական կրթությունը դիտարկվում է հանրակրթության նախնական աստիճան և նպատակ ունի ապահովել նախադպրոցական կրթության համակարգից երեխայի սահուն անցումը դեպի հանրակրթություն: **Չափորոշիչը** հանդիսանում է

երեխայակենտրոն կրթության հիմքը և երեխաների կարիքներին ու հետաքրքրություններին արձագանքելու, յուրաքանչյուր երեխայի անձը հարգելու, համատեղ ուսումնառության գործընթացը խթանելու հնարավորություն է ընձեռում:

Չափորոշչի հիման վրա մշակված նախադպրոցական կրթական ծրագրերի ներդրումը պարտադիր է նախադպրոցական կրթություն իրականացնող հաստատությունների համար:

Այսպիսով ամրապնդել կրթական համակարգի կարողությունը և հասանելիությունը վաղ տարիքի բոլոր երեխաների համար, բարելավել նախադպրոցական կրթական ծառայությունների որակը և մատչելիությունը՝ ուշադրությունը կենտրոնացնելով խոցելի երեխաների ընդգրկվածությունն ընդլայնելու ուղղությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք.
2. «Նախադպրոցական մանկավարժություն» - Երևան 2008 թ. /Ս. Մարության, Ա. Դալլաքյան/
3. «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» - Երևան 2010թ. /Հ. Միտոյան, Լ. Սմբատյան/
4. Մանկապարտեզի վաղ հասակի առաջին և երկրորդ խմբերի (կյանքի առաջին և երկրորդ տարի) կրթական համալիր ծրագիր» - Երևան 2012 թ. /Ա. Հովհաննիսյան, Ս. Մարության և ուրիշներ/
5. Նոր չափորոշչով մանկապարտեզում երեխաները կսովորեն մեդիագրագիտություն, կծանոթանան օրենքի գաղափարին. Նախագիծ, https://www.armtimes.com/hy/article/208780
6. ՀՀ կառավարության որոշումը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին, https://lib.armedu.am/files/resource/files/2022-02-24/9368835223ec84664689175ec655a9e8.pdf, ընդ. 13.05.2021